«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐԱՏԻ ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 7
10.03.2023թ.

1. Համալսարանի վճարովի ուսուցման համակարգում սովորող ուսանողների ուսման վարձավճարների զեղչերի քննարկման և հաստատման հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ Ռեկտորատը որոշեց.

1.1. Հաստատել Ռեկտորատի նիստի ընթացքում ՈՒԳԿՎ պետ Ա. Աղասարյանի կողմից ներկայացված ուսման վարձավճարի զեղչերն ըստ ստորաբաժանումների (որոշումն ընդունվեց միաձայն).

Հ/հ	Տարակարգի անվանումը	Զեղչի տոկոսը	ԱԲԱՖ	ԱՖ	ՊՏՖ	ՍՃՖ	ՍՏՖ	ՍՂ	Սիսիանի մ/գ	Վանաձորի մ/գ	Ա. Քոչինյանի վիրաբույժ. անվ. քոլեջ	Մ. Թումանյանի վիրաբույժ. անվ. քոլեջ	**Ընդամենը Հավելված-ում**
1.	Ապրիլյանի ժամ. մարտ. հերթ. իրակ.	20											**0**
2.	Մարտ. հերթապ. իրականացրած	30		2	1	2	5						**10**
3.	Մինչև մեկ տարեկ երեխա ունեցող	50							2				**2**
4.	23 տարին չլրաց. միակ. ծնողազ.	50			1		2			1			**4**
5.	Սոց. անապ. միավ. բարձր միավ. ունեց.	30											**0**
6.	Սոց. անապ. միավ. ցածր միավոր ունեց.	20											**0**
7.	Բարձր առաջադի-մություն ունեցող	20	4	1	23	1	12	6	1	2	1		**51**
8.	Երեք և ավելի անչափ. կամ երեք և ավելի ուս. երեխա ունեցող ընտ. ուսան.	30		1	1	1		1	1		3		**8**
9.	Վճարովի ուսուցմ. համ. երկու և ավելի ուս. երեխ. ուն. ընտ. ուսան. **(քոլեջ)**	30									1		**1**
10.	Հաշմանդամ ծնող ունեցող	30	1										**1**
11.	Զինվոր. հաշմանդամ ծնող ունեցող	30											**0**
12.	ԲՈՒՀ-ի աշխատող հայցորդ	50		3	1								**4**
13.	Ռեկտորատի որոշում	50	1										**1**
Ընդամենը			**6**	**7**	**27**	**4**	**19**	**7**	**4**	**3**	**5**		**82**

1.2. ԱԲԱՖ մագիստրանտ Նարեկ Կիրակոսյանի 2022-2023 ուստարվա երկրորդ կիսամյակի ուսման վարձը զեղչել 50%-ով («կողմ»՝ 21, «դեմ»՝ 0, «ձեռնպահ»՝ 1):

1.3. Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Հ. Զաքոյանին՝ կազմակերպել քննարկում և Ռեկտորատի առաջիկա նիստի հաստատմանը ներկայացնել.

- ՀԱԱՀ աշխատակից հայցորդների ուսման վարձավճարի 50% զեղչ սահմանելու վերաբերյալ 2019թ-ի հոկտեմբերի 10-ի թիվ 1 որոշումը բարելավելու առաջարկություններ,

- Ուսման վարձավճարի զեղչ սահմանելու համար ՄՈԳ-ի նվազագույն շեմի վերանայման վերաբերյալ Ռեկտորատի 2022թ-ի սեպտեմբերի 19-ի թիվ 1 որոշումը բարելավելու առաջարկություններ:

1.4. ՀԱԱՀ քոլեջների ուսանողների ուսման վարձավճարի զեղչ տրամադրելու համար միջին բալի նվազագույն շեմ սահմանել 18 (բարձր առաջադիմության համար) և 16 (մյուս տարակարգերի համար) միավորները (որոշումն ընդունվեց միաձայն):

2. Աշխատանքային կիսամյակի/պրակտիկայի անցկացումը բարելավելու ուղղությամբ ստորաբաժանումներում իրականացվող աշխատանքների վերաբերյալ.

ՀԱԱՀ Ռեկտորատը միաձայն որոշեց.

2.1. Ընդունել ի գիտություն:

2.2. Հանձնարարել Միջազգային կապերի և կրթական բարեփոխումների աշխատանքների գծով պրոռեկտոր Մ. Մովսիսյանին՝ սեղմ ժամկետում քննարկել համալսարանի տարբեր մասնագիտությունների ուսումնական պլաններում աշխատանքային կիսամյակի/ պրակտիկայի ժամկետների փոփոխության նպատակահարմարությունը և ներկայացնել ուսումնական պլանների փոփոխման առաջարկություններ:

3. Քոլեջների, բակալավրիատի, մագիստրատուրայի ավարտական կուրսերի դիպլոմային/ավարտական աշխատանքները և մագիստրոսական թեզերը գրելու, դրանք պաշտպանության նախապատրաստելու գործընթացների և ի հայտ եկած խնդիրների վերաբերյալ.

Ընդունել ի գիտություն:

4. Ագրարային ճատարագիտության ֆակուլտետի որոշ ուսանողների ավարտական աշխատանքների պաշտպանության և քննաշրջանի ժամկետի փոփոխման հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ Ռեկտորատը բաց քվեարկությամբ միաձայն որոշեց ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի երեք ուսանողներին (Տիգրան Սիրեկանի Վիրաբյան, Գոարիկ Համլետի Գրիգորյան, Վահագն Վարդանի Մաթևոսյան) թույլատրել քնությունները հանձնել վաղաժամ՝ այդ նպատակով կազմելով

հանձնաժողովներ, իսկ Տիգրան Սիրեկանի Վիրաբյանին, Գոարիկ Համլետի Գրիգորյանին թույլատրել պաշտպանել ավարտական աշխատանքները ցերեկային ուսուցման համակարգի 5-րդ կուրսի ուսանողների հետ:

5. Ա. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի 2022-2023 ուսատարվա առաջին կիսամյակի քննությունների արդյունքների վերաբերյալ.

Առաջնորդվել սահմանված կարգով:

6. 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի քննությունների արդյունքների վերաբերյալ.

ՀԱԱՀ Ռեկտորատը միաձայն որոշեց.

6.1. Տարբեր պատճառներով առարկայի/առարկաների քննությանը մասնակցելու երեք հնարավորությունից չօգտված ուսանողներին, համապատասխան խորհրդատվությունից հետո, տալ հնարավորություն մինչև 2023թ.-ի ապրիլի 14-ը՝ մեկ անգամ ևս մասնակցելու առարկայի/առարկաների քննությանը:

6.2. Առարկայի/առարկաների քննությանը մասնակցելու երեք հնարավորություններից օգտված 12 կրեդիտից ավելի կամ մինչև 12 կրեդիտ առարկայական պարտք ունեցող ուսանողներին (123+14 ուսանող) բացառության կարգով տալ հնարավորություն մինչև 2023թ.-ի ապրիլի 14-ը մասնակցելու մեկ առարկայի քննության:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ Հ.Ս. ՋԱՔՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ